ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2021 թ. օգոստոսի 31-ի N 1 ամբիոնի նիստի

2021-2022 ուստարի

Օրակարգ՝

1.2021-22 ուս. տարվա դասախոսների բեռնվածքներ

2.Ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների քննարկում

3. Հեռակա բաժնի քննությունների անցկացում

4. Ծրագրերի և թեմատիկ պլանների քննարկում

5. Այլ

Ամբիոնի նիստին ներկա է եղել Օտար լեզուների դեկան Ս.Լուլուկյանը , ով հայտնեց ,որ ՀՊՄՀ ռեկտոր է նշանակվել Ա.Խոյեցյանը: Մենք ստացել ենք նոր ցուցումներ.

1. Ուշացումներ չլինեն
2. Classroom համակարգ ժամանակին ներբեռնել 2021-22 ուս. տարվա առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները , հարցաշարերը: Սեպտեմբերի 3-ից սկսվում են մշտադիտարկումները:
3. Պատվաստումների հարցը քննարկվել է ռեկտորատի նիստին:

ԼՍԵՑԻՆ՝ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ն.Դալյանին, ով հայտնեց, որ դասապրոցեսը ընդանալու է առերես: Պատմության և հասարակագիտության ֆակուլտետում դասերը ընդանալու են 1-ին հերթով այդ իսկ պատճառով դասացուցակում տեղի են ունեցել փոփոխություններ: Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժին ընդունվել է 14 ուսանող:

2. Մինչև 13.09.2021 ներկայացնել ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաները , նախապես հստակ մտածելով կատարվելիք աշխատանքի կառուցվածքը: Այդ աշխատանքների կատարման մոնիթորինգն անց է կացվելու ամիսը մեկ:

3. Սկսվել է հեռակա բաժնի լուծարքային շրջանը, :

4. Քննարկվել և վերահաստատվել են 2021-22 ուս. տարվա առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները , հարցաշարերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լ. Մարկոսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Կունդրատսը, մ.գ.թ., դոցենտ Լ. Մելիքյանը: Ելույթ ունեցողները անդրադարձան Ն. Դալյանի հնչեցրած հարցերին, ճշտեցին առցանց հարթակում աշխատանքին վերաբերող հարցեր, ինչպես նաև ավարտական և մագիստրոսական թեզերին վերաբերող մանրամասներ:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Աշխատել առերես՝ համաձայն բուհի որդեգրած մոտեցումների:
2. Անցկացնել հեռակա բաժնի քննություններն ըստ ժամանակացույցի:
3. Մինչև ս.թ. սեպտեմբերի 13 ամբիոն ներկայացնել ավարտական և մագիստրոսական թեզերի թեմաները:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2021 թ. սեպտեմբերի 23-ի N 2 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1. Բեռնվածքներ
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հաստատում
3. Աշխատանքը Classroom հարթակում
4. Մանկավարժական պրակտիկայի կազմակերպում և անցկացում
5.Պատվաստումներ
6. Դասալսումներ
7. Այլ

1.Ամբիոնի վարիչ Ն. Դալյանիը հայտնեց, որ 1 կուրսի առկա բակալավրիատում և մագիստրատուրայում որոշ խմբեր չեն ձևավորվել:
Այս հանգամանքով պայմանավորված՝ որոշ դասախոսների բեռնվածքներում կատարվել են փոփոխություններ: Բեռնվածքները կրկին կենթարկվեն փոփոխության հեռակա բաժնի առաջին կուրսի ընդունելությունից հետո:
2.Հաստատվեցին ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը:

Լսեցին — Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի մ.գ.դ., պրոֆեսորի/պ Նաիրա Դալյանի հաղորդումը 2021-22 ուս.տարվա օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի մագիստրատուրա 1 կուրսի մագիստրոսական թեզերի թեմաների, բակալավր առկա 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների, հեռակա 5-րդ կուրսի դիպլոմային աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման վերաբերյալ :

Արտահայտվեցին - Ամբիոնի վարիչ մ.գ.դ., պրոֆեսորի/պ Նաիրա Դալյանը, ամբիոնի դոցենտներ Լ.Մելիքյանը, Ի.Մանուկյանը. Է Բայաթյանը, Լ.Մարկոսյանը :

Որոշեցին – Հաստատել ներկայացված մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների, դիպլոմային աշխատանքների թեմաները և ղեկավարներին ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

	ԹԵՄԱ	ՂԵԿԱՎԱՐ
1.	**Конструирование русской языковой картины мира на материале народных сказок**	**Նաիրա Դալյան մ.գ.դ., պրոֆեսորի/պ.**
2.	Развитие социокультурной компетенции с использованием произведений живописи при обучении РКИ учащихся старшей школы	**Էվելինա Բայաթյան մ.գ.թ., դոցենտ**
3.	Семантическое поле преступления в русском языке в сопоставлении с армянским	**Լևոն Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ**
4.	Реформы русской орфографии: от вариативности к единой норме (на материале лексикографических источников)	**Իրինա Մանուկյան մ.գ.թ., դոցենտ**

ԱԲ - 4 –րդ կուրս / ռուսաց լեզու և գրականություն

2021-2022 ուս.տարի

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
Роль цветообозначений в концептуализации мира		Նաիրա Երվանդի Դալյան մ.գ.դ.,պրոֆեսոր

Метафора света и тьмы (на материале русского и армянского языков)		Լևոն Երվանդի Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ
Лингвистические сказки на уроке русского языка в основной школе		Էվելինա Ամատունու Բայաթյան մ.գ.թ., դոցենտ
Метафорическое использование названий животных в русском и армянском языках.		Գայանե Վլադիմիրի Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ
Формирование коммуникативной компетенции учащихся старшей школы на базе инокультурных текстов		Իրինա Յուրիի Մանուկյան մ.գ.թ., դոցենտ

ՀԲ - 5 –րդ կուրս / ռուսաց լեզու և գրականություն

2021-2022 ուս.տարի

ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

N	ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ
1.	Фразеологизмы русского языка со значением качественной оценки характера человека		Նաիրա Երվանդի Դալյան մ.գ.դ.,պրոֆեսոր
2.	Комплимент как жанр речевого этикета		Նաիրա Երվանդի Դալյան մ.գ.դ.,պրոֆեսոր
3.	Способы выражения сравнения в русском языке и их армянские параллели.		Լևոն Երվանդի Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ
4.	Посессивные конструкции в русском и армянском языках.		Լևոն Երվանդի Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ

5.	Выражение побуждения к действию в русском и армянском языках.		Լևոն Երվանդի Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ
6.	Семантические расхождения в сфере грамматической категории числа (в русском и армянском языках).		Գայանե Վլադիմիրի Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ
7.	Лексико-словообразовательные особенности молодёжного жаргона (на материале русскоязычных блогов).		Գայանե Վլադիմիրի Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ
8.	Словообразовательные средства выражения диминутивности в русском языке (в сопоставлении с армянским)		Գայանե Վլադիմիրի Մարկոսյան բ.գ.թ., դոցենտ
9.	Особенности применения аудиовизуальных средств на начальном этапе обучения РКИ		Էվելինա Ամատունու Բայաթյան մ.գ.թ., դոցենտ
10.	Формирование основ диалогической речи на уроке русского языка в начальной школе		Էվելինա Ամատունու Բայաթյան մ.գ.թ., դոցենտ
11.	Урок русского языка в системе РКИ		Էվելինա Ամատունու Բայաթյան մ.գ.թ., դոցենտ
12.	Местоимения в рекламном тексте: прагматический анализ.		Իրինա Յուրիի Մանուկյան մ.գ.թ., դոցենտ
13.	Использование информационно-коммуникационных технологий в организации самостоятельной работы по русскому языку на продвинутом этапе обучения.		Իրինա Յուրիի Մանուկյան մ.գ.թ., դոցենտ

14.	Национально-культурная коннотация русских фразеологизмов со значением неодобрения		**Իրինա Յուրիի Մանուկյան մ.գ.թ., դոցենտ**

3. Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից:

4. Դալյանը հավելեց նաև, բեռնվածքում նախատեսվում է մանկավարժական պրակտիկայի ժամերը բաշխել բոլոր դասախոսների միջև:

5. COVID-19

Ամբիոնում 9 հոգի պատվաստված են, իսկ մյուսները հրաժարվել են պարբերաբար և կթեստավորվեն:

6.Ս.Թ. հոկտեմբեր ամսից կսկսվեն դասալսումները: Ամբիոնի դասախոսները պետք է ներկայացնեն համալսումների ժամանակացույցը:

Ամբիոնում պարբերաբար անց են կացվելու գիտա-մեթոդական սեմինարներ՝ հոկտեմբերին Է. Բայաոյանը, նոյեմբերին՝Ն.Այվազյանը:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման

մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Ն. Դալյան

բ.գ.դ., պրոֆ. պ/կ

Քարտուղար՝ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2021 թ. հոկտեմբերի 1-ի N 3 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1.ՀՊՄՀ աշխատակիցների թեստավորում կամ պատվաստում / COVID-19 :
2.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ
3.Աշխատանքը Classroom հարթակում
4.Մանկավարժական պրակտիկայի կազմակերպում և անցկացում
5. Այլ

1. ՀՊՄՀ աշխատակիցները պետքե ներկայացնեն թեստավորման կամ պատվաստման սերտիֆիկատ: Հոկտեմբերի 12-ին ժամը 12:20 անց է կացվելու թեստավորում / COVID-19:

Կորոնավիրուսի (COVID-19) պատճառով հայտարարված կարանտինի պայմաններում ՀՊՄՀ-ն 15.10.21-15.11.21 ամբողջովին կանցնի է առցանց դասավանդման:

2. Ամբիոնի վարիչի գլխավորությամբ և գիտական ղեկավարների մասնակցությամբ անց է կացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ:
3. Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից:
4. Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ՕԼՖ ուսանողների մանկավարժական պրակտիկան անց է կացվելու ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում հետևյալ ժամկետներում՝

Նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 20-ը – 4 կուրսի ուսանողները կարող են միանալ առցանց դասերին

Նոյեմբերի 9-30 – մագիստրատուրայի I կուրսի ուսանողների համար լինելու է ակտիվ պրակտիկա՝ կրկին առցանց դասերին միանալու միջոցով:

5. Ամբիոնի կողմից պարբերաբար բոլոր դասախոսներին փոխանցվում են վերապատրաստման և գիտաժողովների վերաբերյալ տեղեկատվական նամակներ, խորհուրդ է տրվում, հնարավորության դեպքում, մասնակցել նման միջոցառումների:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2021 թ. հոկտեմբերի 29-ի N 4 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1.Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.թ. Բելլա Նորիկի Այունցին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին երաշխավորության հարցը:
2. Անցում առցանց դասավանդման:
3.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի քննարկում
4. Աշխատանքը Classroom հարթակում
5. Մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում
6. Դասալսումներ
7.ՀՊՄՀ 100 ամյակի միջոցառումներին նվիրված քննարկումներ

https://meet.google.com/qzb-qpvw-zsa

1. ***ԼՍԵՑԻՆ***՝ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.թ. Բելլա Նորիկի Այունցին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին երաշխավորության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ամբիոնի վարիչ, մ.գ.դ. Ն.Ե. Դալյանը նշեց, որ մ.գ.թ. Բ.Ն.Այունցը 2018 թ-ից աշխատել է ՀՊՄՀ-ի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, այնուհետև 2020 թ. սեպտեմբերից տեղափոխվել է ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն: Նա հեղինակ է թվով 13 գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների: §Թղթապանակի տեխնոլոգիան ուսանողների՝ ռուսաց լեզվի ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստման գործընթացում¦ թեմայով թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո Բ.Այունցը հրատարակել է վեց հոդված և մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ: Ն.Դալյանը փաստեց, որ Բ.Ն.Այունցը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի II բաժնի 5 «բ» կետով առաջադրվող բոլոր պահանջներին, ինչի

համար ամբիոնը քվեարկությամբ կարող է երաշխավորել Բ.Այունցին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ մ.գ.թ., դոցենտ Է.Բայաթյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Մելիքյանը, մ.գ.թ., դոցենտ Լ.Կունդրատսը, դասախոս Զ. Մելկիկյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Բ.Այունցը ամբիոնում աշխատելու ընթացքում իրեն դրսևորել է որպես բանիմաց և պարտաճանաչ մասնագետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.թ. Բելլա Նորիկի Այունցին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը դրական որոշմամբ ներկայացնել օտար լեզուների ֆակուլտետի խորհուրդ:

2. ՀՊՄՀ-ն 26.10.21-15.11.21 ամբողջովին անցել է առցանց դասավանդման:
3. Ամբիոնի վարիչի գլխավորությամբ և գիտական ղեկավարների մասնակցությամբ անց է կացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հերթական մոնիթորինգը:
4. Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից:
5. Մանկավարժական պրակտիկան մոտենում է ավարտին, պատկերն արդեն հստակ է: Մանկավարժական պրակտիկան կարելի է ընդհանուր առմամբ հաջողված համարել:
6. Ամբիոնի վարիչ, մ.գ.դ.,պրոֆ. Ն.Ե. Դալյանը նշեց, որ անց են կացվել առցանց դասալսումներ: Դասերը ընթանում են ըստ բուհի որթեգրած քաղաքականության և ընթացակարգի:
7. Քննարկվեցին ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված նախատեսվող միջոցառումները :

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2021 թ. նոյեմբերի 29-ի N 5 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1.Բեռնվածքներ

2. 2021թ. ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվության քննարկում և հաստատում:

3.Միջբուհական գիտաժողով:

4. Դասալսումներ

5. Հայցորդների ատեստավորում

6. Հաշվետվություն 20 21-2022 ուս. տարվա պրակտիկայի արդյունքների վերաբերյալ /05.10.2021-15.11.2021 /

1. Ամբիոնի դասախոսների բեռնվածքները հաստատվել են: Ժամաքանակի կրճատումներ են եղել և որոշ դասախոսների բեռնվացքներում փոփոխություններ են կատարվել:

2. Քննարկեցին և հաստատեցին 2021թ. ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությանը:

3. Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.դ. Ն.Ե. Դալյանի հաղորդումը առ այն, որ 2021 թ. դեկտեմբերի 18-ին տեղի կունենա երկրորդ հանրապետական միջբուհական գիտաժողով «Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»: Նիստին քննարկվեցին տվյալ ժողովածույի հոդվածները որոնք համապատասխանում էին գիտաժողովի թեմատիկ ուղվածությանը: «Актуальные проблемы лингвистики и методики преподавания РКИ»

ժողովածուն ներկայացնել օտար լեզուների ֆակուլտետի խորհուրդ տպագրությանը երաշխավորելու համար:

4. Ամբիոնի վարիչ Ն. Դալյանը իրականացրել է դասալսումներ որից հետո տեղի են ունեցել քննարկումներ:

5. Քննարկեցին և հաստատեցին ամբիոնի հայցորդներ Ի.Ալլահվերդյանի և Ա.Սեխպեյանի ներկայացրաշ հաշվետվությունները:

6. Հաշվետվություն 20 21-2022 ուս. տարվա պրակտիկայի արդյունքների վերաբերյալ /05.10.2021-15.11.2021 /

ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի *ռուսաց լեզու և գրականություն* մասնագիտության 4-րդ կուրսի 8 ուսանողների մանկավարժական պրակտիկան կազմակերպվել է Երևանի Ս. Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում:

Պրակտիկայի սկզբից մեկ ամիս առաջ ընտրվել է դպրոցը, որի պայմանները հիմնականում բավարարում էին մանկավարժական պրակտիկան բարեհաջող անցկացնելու համար:

Սահմանված ժամկետներում իրականացվել է պրակտիկային մասնակցող ուսանողների հրամանագրումը և ներկայացվել պրակտիկայի վարչություն:

Նախապատրաստական կոնֆերանսների ժամանակ ուսանողներին է ներկայացվել պրակտիկայի նպատակը, խնդիրները, գնահատման չափանիշները և սպասվող վերջնարդյունքները:

Մանկավարժական պրակտիկայի տվյալ շրջափուլը իրականացվել է նորմատիվ փաստաթղթերով՝ ուսումնական պլանով և ծրագրով, առարկայական նկարագրով ու թղթապանակով սահմանված պահանջների և չափանիշների համաձայն: Պրակտիկայի հենց սկզբից մշակվել է աշխատանքային պլան, ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը՝ հանձինս ղեկավարի, ուսանողներին ապահովել է մանկավարժական պրակտիկայի փաստաթղթերի փաթեթով, որը զգալիորեն հեշտացրել է ուսանողների կողմից կատարվելիք աշխատանքը:

Պրակտիկայի մեկնարկին մի փոքր խորհրդատվական զրույց անցկացնելուց հետո ուսանողները սկսեցին դասալսումները, իսկ անմիջապես հետո՝ քննարկում և դասի վերլուծություն:

Դասից-դաս նրանք զարգացրեցին իրենց ունեցած դասավանդման հմտությունները, մասնավորապես՝ յուրաքանչյուր դաս մանրամասնորեն պլանավորվում էր, ավելի ռացիոնալ և նպատակասլաց էր օգտագործվում ողջ դասաժամը, ոմանց հաջողվում էր ինտերակտիվ հաղորդակցական միջավայր ստեղծել և այլն:

Յուրաքանչյուր դասի վերջում կազմակերպվել են քննարկումներ՝ պրակտիկայի ղեկավարների, ուսուցիչների և ուսանողների մասնակցությամբ: Քննարկվել է դասերի ժամանակ կիրառված փոխներգործուն մեթոդների արդյունավետությունը, դասի պլանի օգտագործման կարևորությունը, խոսքային հաղորդակցման տեսակների կիրառման և զարգացման ուղիները, դասաժամի ճիշտ պլանավորման և այն արդյունավետորեն անցկացնելու նախապայմանները, դասարանի կառավարման խնդիրները: Ուսանողները ստացել են իրենց հուզող բոլոր հարցերի սպառիչ պատասխանները:

Բոլոր ուսանողները մասնակցել են փոխադարձ դասալսումների և լրացրել են դասալսումների թերթիկները: Դասերից և դասալսումներից հետո միշտ տեղի են ունեցել դասերի քննարկում և դասի պլանի ստուգում:

Արվել են դիտողություններ, որոնք ուսանողները փորձել են շտկել հաջորդ դասերի ժամանակ: Քննարկումների ժամանակ անդրադարձ է կատարվել ռուսաց լեզվի ուսուցման նոր ինտերակտիվ մեթոդներին, խոսքային հաղորդակցման տեսակներին, բառապաշարի զարգացման ռազմավարություններին, թղթապանակի վարման ընթացակարգին, նորագույն տեխնոլոգիաների կիրառման տեսակներին, դասի պլանի գրանցման ձևերին և այլն:

Կարող ենք փաստել նաև, որ պրակտիկայի ընթացքում ուսանողները հիմնականում ձեռք են բերել ուսուցչին անհրաժեշտ ունակություններ և կարողություններ՝ կիրառելով համալսարանում մասնագիտական դասընթացների ընթացքում ձեռք բերված տեսական, գիտամանկավարժական, մեթոդական և գործնական գիտելիքները:

Մեթոդիստների և ուսանողների միջև կապը պահպանվել է նաև Google Classroom հարթակում: Այստեղ ուսանողներին տրվել են հանձնարարականներ, որոնք

նրանք պատրաստակամորեն կատարել են, անհրաժեշտ փաստաթղթեր՝ պրակտիկայի առարկայական նկարագիր, դասապլանի նմուշներ:

Այս տարի պրակտիկայի ընթացքում ուսանողները չափազանց ակտիվ էին, պատասխանատվության բարձր զգացումով կատարում էին իրենց պարտականությունները: Պետք է ընդգծել նաև, որ շատ ուսանողներ մանկավարժական և մեթոդական հմտությամբ էին վարում դասերը՝ օգտագործելով ինտերակտիվ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ: Նրանք հաճախ բացի սեփական դասերից փոխարինում էին նաև հիվանդ ուսուցիչներին, աշակերտների հետ անցկացնում լրացուցիչ պարապմունքներ:

Այնուամենայնիվ, պետք է նշենք, որ

- ուսանողների լեզվական գիտելիքների բազան չի համապատասխանում ծրագրային պահանջներին;
- ուսանողները դեռևս դժվարանում են դասապլաններ մշակելիս, հիմնականում՝ դասի նպատակն ու խնդիրները ձևակերպելիս:

Թղթապանակների ներկայացում: Պրակտիկայի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում ուսանողներն ամփոփեցին իրենց աշխատանքի արդյունքները՝ լրացնելով թղթապանակները, որոնք նրանց հնարավորություն են տալիս ոչ միայն ցուցադրել արված աշխատանքը, այլ նաև անդրադարձ կշռադատել (ռեֆլեքսիա անել) մանկավարժական գործունեության իրենց փորձառության մասին:

Բոլոր ուսանողները ժամանակին հանձնել են թղթապանակներն ամբիոն, որոնք ստուգվել ու գնահատվել են:

Մասնագ.	Պրակտ.-ի տեսակ	կուրս	ուս. քանակ	Անհատական պրակ.-ի մասն.	Կրկնակի պրակտիկա	Պրակտիկայի մասնակիցների քանակ, որոնցից ստացել են՝

				ուս. քանակ	անցած ուսանողների թիվը	A	B	C	D
Ռուս.լեզու և գրակ.	կիրառական	3	8	-	-	4	3		1

Առաջարկություններ՝

- պրակտիկաների բազաների վերանայում և ընդլայնում,
- պրակտիկայի ժամկետների հստակեցում:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2021 թ. դեկտեմբերի 27-ի N 6 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1. 2021-2022 ուստարվա 1 –ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ
2. Հեռակա բաժնի դասպրոցեսի մեկնարկ
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի քննարկում
4. 1-ին կիսամյակի ամփոփում
5. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միթոցառումներ
6. Ընթացիկ հարցեր

1. 2021-22 ուս.տարվա 1 կիսամյակի ամփոփիչ քննությունների տոմսերի քննարկում և հաստատում: Քննությունները անց են կացվելու առերես:
2. 2022 թ. հունվարի 10-ից մեկնարկում են հեռակա բաժնի դասերը: Google Classroom հարթակում տեղադրել բոլոր նյութերը:
3. Ամբիոնի վարիչի գլխավորությամբ և գիտական ղեկավարների մասնակցությամբ անց է կացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հերթական մոնիթորինգը:

   Լ.Մարկոսյանը նշեց,որ 4-րդ կուրսի ուսանողները պատրաստեն, 2-րդ կուրսի ուսանողները փետրվարի կներկայացնեն աշխատանքների սևագիր տարբերակը;

   Է. Բայաթյանը նշեց, որ ուսանողը ներկայացրել է 1 –ին գլուխը:

   Ի.Մանուկյանը նշեց,որ Վ. Լալայանը խնդրահարույց է:

   4. 1-ին կիսամյակիը շատ հագեցած է անցել.

ա/2021 թ. դեկտեմբերի 16-ին «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոնում ամբիոնի դասախոսներ Գ.Բալյանը և Ն.Այվազյանը անց են կացրել աստունքի և երաժշտության ցերեկույթ <<Ռուս բանաստեղծները Հայաստանի մասին>>

բ/ Անց է կացվել ասմունքի մրցույթ : Զ.Մելկիկյանի ուսանողը գրավել է 3-րդ տեղը:

Հոկտեմբերի 20-ին Մանկավարժական համալսարանում մեկնարկեց «Ռուսաց լեզուն և 21-րդ դարի գլոբալ մարտահրավերները Եվրասիական տարածքում» միջազգային գիտա-գործնական աշխատաժողովը:

ՀՊՄՀ-ի, Ռուսական պետական հումանիտար համալսարանի, Երևանում ռուսական մշակույթի կենտրոնի և Հայաստանում ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների ասոցիացիայի համատեղ ձեռնարկն անցկացվեց խառը ձևաչափով, այդ թվում՝ առցանց:

Երկօրյա աշխատաժողովին մասնակցում են միջին, բարձրագույն և լրացուցիչ կրթության հաստատությունների ռուսաց լեզվի և գրականության դասավանդողներ, հետազոտողներ, գիտության և մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ, ռուսաց լեզուն կիրառող անկախ հեղինակներ և այլն:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանն ընդգծեց աշխատաժողովում ԱՊՀ երկրներից ռուսաց լեզվի մասնագետների ընդգրկվածության կարևորությունը: Վերջինս նշեց, որ քննարկվող թեմաների արդիականությունը կասկած չի հարուցում՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ հետխորհրդային այլ երկրների դպրոցներում և բուհերում, ռուսաց լեզուն՝ որպես մայրենի, ոչ մայրենի և օտար լեզու կրում է նաև քաղաքական և սոցիալական գործոնների ազդեցությունը. «Մեր երկրներում ռուսաց լեզվի զարգացման ուղղությամբ անհրաժեշտ է լրացուցիչ շահագրգռվածություն: Կարևոր են այն նախագծերը, որոնք միավորում են ոչ միայն մանկավարժական հանրույթին, այլև մեր երկրների երիտասարդությանը, որոնց համար այսօր արդեն անհրաժեշտ է ստեղծել միասնական կրթական և մտավոր տարածք»,-հավելեց Սրբուհի Գևորգյանը:

Ռուսական պետական հումանիտար համալսարանի Ռազմավարական նախագծերի բաժնի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու Յուրի Ֆիլիպովն հույս հայտնեց, որ աշխատաժողովում քննարկվող լեզվաբանության հարցերը, ռուսաց լեզվի դասավանդման հիմնախնդիրները, գրականության վերաբերյալ իրենց բուհի կատարած ուսումնասիրություններն ու ներկայացվող դասախոսությունները կհետաքրքրեն ԱՊՀ երկրների՝ ռուսաց լեզվի զարգացմամբ հետաքրքրված մասնագետներին:

Երևանում Ռուսաստանի Գիտության և մշակույթի կենտրոնի ներկայացուցիչ Սոնա Սարաջյանն էլ աշխատաժողովի մասնակիցներին փոխանցեց կառույցի ղեկավար՝ Վադիմ Ֆեֆիլովի ողջույնի խոսքը՝ նկատելով, որ ընթացիկ տարում առցանց ձևաչափով անցկացվող աշխատաժողովին մասնակցել են ինչպես Ռուսաստանի և Հայաստանի, այնպես էլ ԱՊՀ այլ երկրների ռուսաց լեզվի մասնագետներ.«Սա խոսում է աշխատաժողովի պահաջվածության և արդիականության մասին, իսկ թեման արտահայտում է ներկայիս դժվար ժամանակներն ու ընդգծում՝ դպրոցում և բուհական համակարգում ռուսաց լեզվի և գրականության դասավանդման խնդիրները բարձրաձայնելու անհրաժեշտությունը»:

Վադիմ Ֆեֆիլովն ընդգծել էր նաև ռուսագիտության զարգացացումը և վստահությունն էր հայտնել, որ մասնագետները կքննարկեն ոլորտի խնդիրներն ու ձեռքբերումները, իսկ աշխատաժողովն էլ կնպաստի միջազգային համագործակցության հետագա զարգացմանը: Այդ հարցում պատրաստ է աջակցել նաև իր ղեկավարած կառույցը:

Դեկտեմբերի 21-22-ը անցկացվող «Ռուսաց լեզուն և 21-րդ դարի գլոբալ մարտահրավերները Եվրասիական տարածքում» միջազգային գիտա-գործնական աշխատաժողովը կանցկացվի երեք մասնախմբերում. նախատեսված են կլոր սեղաններ, ռուսաց լեզվի դասավանդման հիմնախնդիրներին վերաբերող բանավեճեր, նորարարական փորձի փոխանակում, քննարկումներ:

Աշխատաժողովի առաջին օրը զեկույցներով հանդես եկան Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի ներկայացուցիչները, որոնք իրենց զեկույցներում անդրադարձան խոսքային բարեվարքությանը՝ որպես սոցիալական և հուզական հարաբերությունների ձևավորման գործիք, լեզվամշակութաբանական մոդելների բառարանի նախագծին, տարբերակների մրցակցության լույսի ներքո, ռուսաց լեզվի քերականության դինամիկ գործընթացներին:

Աշխատաժողովի շրջանակներում անցկացվեցին նաև գիտագործնական վարպետաց դասեր. բանախոսները ներկայացրին ռուս գրականության անցյալն ու ներկան՝ ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելիս, ինքնության ճգնաժամերը ռուս գրականությունում, 2020-21 թվականների ռուսական մշակույթը՝ գրականություն, կինեմատոգրաֆ, թատրոն (հիմնական միտումների ընդհանուր ակնարկ), ինչպես նաև ժամանակակից գործընթացները:

5. Տարվում են նախապատրաստական աշխատանքներ ՀՊՄՀ 100 ամյակի միջոցառումներին նվիրված:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. հունվարի 31-ի N 7 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1. Առկա բաժնում 2021-22 1-ին կիս. քննաշրջանի արդյունենրի ամփոփում
2. Ավարտական, դիպլոմային աշխատաքների, մագիստրոսական թեզերի քննարկման ժամանակացույց
3. Երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները
4.ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումներ
5. Քարոզարշավի շրջանակներում ՀՀ միջնակարգ դպրոցներ այցեր

1.Ընդհանուր առմամբ, դրական գնահատել առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները

2. Ամբիոնի վարիչի գլխավորությամբ և գիտական ղեկավարների մասնակցությամբ անց է կացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հերթական մոնիթորինգը:

3. Classroom հարթակում տեղադրել առկա բաժնի երկրորդ կիսամյակի համար անհրաժեշտ նյութերը:

4. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումների իրականացում

5.Ակտիվ զբաղվել ՀՄՊՀ գովազդմամբ և նոր ուսանողների ներգրավման աշխատանքներով: Ամբիոնի վարիչ՝ մ.գ.դ. Ն. Դալյանն ընդգծեց բուհ-դպրոց կապի ուժեղացման և պոտենցիալ ուսանողների ներգրավման հարցը, խնդրեց, որ դասախոսները ներկայացնեն տվյալներ առ այն, թե երբ և որ դպրոցներում է անցկացվել քարոզչություն:

Դիմորդի անուն, ազգանուն, հայրանուն	Ֆակուլտետ	Մարզ	Դպրոց
Վարդանյան Մելինե	ՕԼՖ-10 ռուսաց լեզու և գրականություն	Արմավիր	
Հովհանյան Ալվինա	ՕԼՖ-10 ռուսաց լեզու և գրականություն	Երևան	ԵՊՀ շրջանավարտ
Մանուկյան Քրիստիյա	ՕԼՖ-10 ռուսաց լեզու և գրականություն	Երևան	թիվ 159
Գրիգորյան Լիանա	ՕԼՖ-10 ռուսաց լեզու և գրականություն	Երևան	Ինֆորմատիկայի քոլեջ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. փետրվարի 24-ի N 8 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ՕԼՖ-10-ի հեռակա բաժնի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների քննարկում

2.Դասալսումներ. 1-ին կիսամյակի հաշվետվություն

3. 2021-22 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական նյութերի (առարկայական նկարագիր, թեմատիկ տրոհում, հարցաշար, հավելյալ նյութեր) տեղադրում Google Classroom էլեկտրոնային հարթակում

4.Որակի բարձրացման դասընթացներ 28.02-03.03.2022

1. Ամբիոնի վարիչ, մ.գ.դ. Ն. Դալյանը հայտնեց, որ, համաձայն ՕԼՖ-10-ի հեռակա բաժնի 5-րդ կուրսի ուսանողների գիտական ղեկավարների բանավոր տեղեկացման,ավարտական աշխատանքները շուտով պատրաստ կլինեն առաջիկա ատեստավորման համար:

2.Ն.Դալյանն ամփոփեց 2021-22 ուս.տարվա 1-ին կիսամյակում կատարած դասալսումների արդյունքները, նշելով, որ դասալսումները շարունակվելու են և 2-րդ կիսամյակում:Ամբիոնի վարիչը հատկապես կարևորեց խոսքային գործունեության 4 ձևերի կիրառման անհրաժեշտությունը յուրաքանչյուր դասի ընթացքում:

3. Ն. Դալյանը նշեց, որ անհրաժեշտ է Google Classroom էլեկտրոնային հարթակում տեղադրել 2021-22 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական նյութերը, այն է՝ առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը, ինչպես նաև այլ հավելյալ նյութեր:

4. 28.02-03.03.2022 ամբիոնի դասախոսները կմասնակցեն ՈԲ դասընթացին /Курсы по повышению квалификации преподавателей-русистов,организованные Федеральным государственным бюджетным образовательным учреждением высшего образования «Государственный институт русского языка им. А.С. Пушкина» по программе повышения квалификации «Интегративный потенциал современной лингвистики: личность, концепты, дискурс». (36 часов)

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. մարտի 31-ի N 9 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1.Ավարտական, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի մոնիթորինգի արդյունքների ամփոփում
2. Միջանկյալ ստուգման նախապատրաստական աշխատանքները
3. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում
4. ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված միջոցառումների ցանկ
5.Մասնագիտական քննության հացաշարի հաստատում / Вопросы кандидатского экзамена по специальности 13.00.02 Теория и методика обучения и воспитания (русский язык как иностранный)

6. Դոցենտի գիտական կոչման շնորհում

1.Ավարտական, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը նշանակել ապրիլի 20-ին: Ուսանողները պատրաստ են ախապաշտպանությանը :

2.Նախապատրաստվել միջանկյալ ստուգմանը՝ անցկացնելու այն հիմնականում բանավոր: Ամբիոնի վարիչ՝ Ն.Դալյանը տեղեկացրեց, որ Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզուև գրականություն բաժնի հեռակա 5-րդ կուրսի 6 ուսանող և առկա 4-րդ կուրսի մեկ ուսանող հեռացվելեն բուհից: Առկա բակալավր 4-րդ կուրսի Օտար լեզու առարկայի քննությունները կմեկնարկեն ապրիլ ամսից:

3 Ն. Դալյանը նշեց, որ մագիստրոսները ակտիվ մասնակցել են պրակտիկային , ներկայացրել իրենց թղթապանակները:

4. Նախապատրաստվում են մի շարք միջոցառումներ նվիրված ՀՊՄՀ 100 ամյակին:

ՀՊՄՀ-ի 100 ամյակին նվիրված միջոցառումների ցանկ

Օտար լեզուների ֆակուլտետ

ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Միջոցառում	Վայր	Ժամանակ	Մասնակից/ պատասխանատու	Քովիդ 19	Ֆինանսավորում
РЕСПУБЛИКАНСКАЯ НАУЧНО-ПРАКТИЧЕСКАЯ КОНФЕРЕНЦИЯ АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ЛИНГВИСТИКИ И МЕТОДИКИ ПРЕПОДАВАНИЯ РКИ (посвященная 100-летию АГПУ)	«Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն	2022 թ. նոյեմբեր	ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Դալյան Ն.Ե., ամբիոնի դասախոսներ,ուսանողներ		
Կլոր սեղան	«Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն	2022թ. փետրվար	ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Դալյան Ն.Ե., ամբիոնի դասախոսներ,ուսանողներ		
Վիկտորինա	«Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն	2022թ. մարտ	ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Դալյան Ն.Ե., ամբիոնի դասախոսներ,ուսանողներ		
Օլիմպիադա	«Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն	2022թ. ապրիլ	ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Դալյան Ն.Ե., ամբիոնի դասախոսներ,ուսանողներ		
Մեթոդական սեմինարներ	«Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման և թեստավորման կենտրոն	2022 թ. փետրվար-նոյեմբեր	ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Դալյան Ն.Ե., ամբիոնի դասախոսներ,ուսանողներ		

5.Քննարկեցի և հաստատեցին մասնագիտական քննության հացաշարը /Вопросы кандидатского экзамена по специальности 13.00.02 Теория и методика обучения и воспитания (русский язык как иностранный).

6. Օտար լեզուների ֆակուլտետի ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.թ. Բելլա Նորիկի Այունցը 2022թ. ապրիլի 29- ին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ստացել է դոցենտի գիտական կոչում /Դ N 04178/:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. մայիսի 2-ի N 10 ամբիոնի նիստի

1 Ավարտական և մագիստրոսական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները
2. . Քննաշրջան
3.ՕԼՖ-10 առկա մագիստրատուրա 1-ին կուրսի պրակտիկան և հաշվետվությունները կատարած աշխատանքի վերաբերյալ:
4. Աշխատանք Google Classroom էլեկտրոնային հարթակում

ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին, ով հայտնեց, որ անց է կացվել ՕԼՖ -10 մագիստրատուրայի 2-րդ կուրսի, բակալավրիատի առկա ուսուցման բաժնի 4-րդ կուրսի / 22.04.2022 / և հեռակա բաժնի 5-րդ կուրսի /11.05.2022/ ավարտական և մագիստրոսական աշխատանքների նախապաշտպանություն, որի արդյունքներն արձանագրվել են: Ն. Դալյանը կարևորեց հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացնելու կարևորությունը, մանկավարժական պրակտիկայի դերն ու նշանակությունը ապագա մանկավարժների պատրաստման հարցում՝ շեշտելով, որ այդ հարցերին անհրաժեշտ է մեծագույն պատասխանատվությամբ մոտենալ և իրականացնել մագիստրատուրայի 1-ին կուրսից տարվող աշխատանքների մոնիթորինգ:

2. 2-րդ կուրսերի քննական տոմսերը կվերանայվեն, քննությունները հունիսին են մեկնարկում: Առկա մագիստրատուրայի 2-րդ միջանկյալ աշխատանքը կանցկացվի բանավոր ձևաչաթով , տեքստերը կուղարկվեն բոլոր դասախոսներին:

3. Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Ն. Դալյան
ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ	Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2022 թ. հունիսի 30-ի N 11 ամբիոնի նիստի

Օրակարգ՝

1. Պետական քննությունների արդյունքների ամփոփում
2. Ծրագրերի վերանայում
3. Գալիք ուստարվա բեռնվածությունը և ամբիոնի աշխատանքների պլանը
4. Այլ

1. Ամբիոնի վարիչ Ն.Դալյանը նշեց,որ ընդհանուր առմամբ առկա և հեռակա բաժինների բակալավրիատի և մագիսրատուրայի ավարտական քննություններն ընթացել են առանց որևէ խնդիրների, դրանք տեխնիկապես կազմակերպվել են բարձր մակարդակով, չի եղել որևէ բողոքարկում: Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տ.Միքայելյանը շնորհակալություն հայտնեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բոլոր գրախոսներին մանրակրկիտ և անաչառ աշխատանքի համար:
2. Ամբիոնը,ստանալով փաստաթղթերի փաթեթ մի շարք հարցեր ունեցավ առարկայական նկարագրերի հետ կապված: Առաջարկվեց վերանայել առարկայական նկարագրերը և թեմատիկ նկարագրերը, համատասխանեցնելով թեմաները փաստաթղթերի կառուցվաշքին:
3. Դասախոսների ծանրաբեռնվածություն:
   Ամբիոնում ժամաքանակի նվազում է տեղի ունեցել, կան մասնագիտություններ որոնք չեն համալրվել և մենք նվազագույն ժամաքանակով ենք բեռնվածքը կազմել: Ամբիոնի դասախոս Գ.Վ.Մարկոսյանի ժամերը նվազել են և նրա բեռնվածքը չի ստացվում, Ա. Վահանյանը իր դիմումի համաձայն դուս է գալիս:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան